Արձանագրություն N 2-3

ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-26/3 ծածկագրով Հրազդան մարզադաշտի տեխնիկական վիճակի ստուգման ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

13.02.2026թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց
Անդամներ՝ Հ. Գինովյան
Տ. Կոմիտասյան
Ա. Քոչարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Հյուսիսյանը

1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման գնահատման մասին

(Մ. Աղայանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակից «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 11.02.2026թ. ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է նրա կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:

2. Տվյալներ ընտրված մասնակցի վերաբերյալ

(Մ. Աղայանց)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները՝ «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

2.2 Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ

(Մ. Աղայանց)

3.1 Սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշման հիման վրա, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Աղայանց)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Մ. Աղայանց

Անդամներ՝ ---------- Հ. Գինովյան

---------- Տ. Կոմիտասյան

---------- Ա. Քոչարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ա. Մանուչարյան